

«Իմ քայլը» հիմնադրամի կրթաթոշակային ծրագրի պայմանները և կրթաթոշակառուի պարտավորությունները

«Իմ քայլը» հիմնադրամի կրթաթոշակային ծրագրի առաքելությունն է նպաստել Հայաստանի հարակայուն զարգացման առաջնահերթություններից բխող մարդկային կապիտալի հզորացմանը:

Մենք կրթաթոշակ ենք շնորհում աշխարհի առաջատար ուսումնական հաստատություններ ընդունված այն երիտասարդներին, որոնք ցանկանում են ձեռք բերել Հայաստանի կայուն զարգացման առաջնահերթություններից բխող մասնագիտություններ և իրենց գիտելիքն ու հմտությունները ծառայեցնել Հայաստանի առաջընթացին:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Իմ քայլը» հիմնադրամից կրթաթոշակ ստանալու դեպքում ուսանողը պարտավորվում է՝

- ուսանել և հաջողությամբ ավարտել այն համալսարանի կրթական ծրագիրը, որի համար շնորհվել է Հիմնադրամի կրթաթոշակ,
- ուսումն ավարտելուց հետո վերադառնալ Հայաստան և առնվազն 3 տարի ապրել և աշխատել Հայաստանում,
- ուսումնառության ընթացքում մշտական կապի մեջ լինել Հիմնադրամի հետ,
- ներգրավվել Հիմնադրամի նախագծերում և ծրագրերում,
- ուսումնառության ընթացքում ակտիվորեն մասնակցել տեղի հայ համայնքի գործունեությանը,
- զարգացնել իրենց մասնագիտական ոլորտը Հայաստանում և փոխանցել գիտելիքը մյուսներին:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Եթե «Իմ քայլը» հիմնադրամի կրթաթոշակի ծրագրի շահառուն չկատարի պայմանագրով ստանձնած պարտականությունները կամ կատարի մասամբ, շահառուն պետք է վերադարձնի գումարը Հիմնադրամին՝ համաձայն պայմանագրի:

- Եթե Հիմնադրամի կրթաթոշակի ծրագրի շահառուն չկատարի պայմանագրով ստանձնած պարտականությունները կամ կատարի մասամբ,, ապա նա պարտավոր է վերադարձնել փոխառությունը Հիմնադրամին միանվագ՝ Հիմնադրամի կողմից ներկայացված պահանջի ներկայացումից հետո՝ 30 օրվա ընթացքում: Մինչև նշված ժամկետի լրանալը կրթաթոշակառուի կողմից փոխառությունը չվերադարձվելու դեպքում սահմանված 30-օրյա ժամկետի լրանալու հաջորդ օրվանից փոխառության գումարի չվերադարձված մասի վրա կհաշվարկվի տուժանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում Հիմնադրամն իրավունք ունի դիմել կրթաթոշակառուի հնարավոր գործատուին, ինչպես նաև վերջինիս գտնվելու/բնակության վայրի պետական մարմիններին, մասնավոր կազմակերպություններին՝ տեղեկացնելով պայմանագրի դրույթների խախտման և դրանից բխող պատասխանատվության վերաբերյալ:
- Պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում Հիմնադրամն իրավունք ունի սոցիալական ցանցերով, ինչպես նաև զանգվածային տեղեկատվության այլ միջոցներով հրապարակավ տարածել կրթաթոշակառուի կողմից իր՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման և դրանից բխող պատասխանատվության մասին:
- Պայմանագրի կնքման, կատարման կամ մեկնաբանման, ինչպես նաև խախտման, դադարման կամ անվավերության հետ կապված ցանկացած վեճ պետք է վերջնականորեն լուծվի արբիտրաժի միջոցով: Կողմերը պարտավորվում են առաջնորդվել UNCITRAL կանոններով:
- Կանոնների համաձայն իրականացված արբիտրաժի վճիռը վերջնական է, պարտադիր և կիրառման ենթակա Հիմնադրամի և կրթաթոշակառուի կողմից և պարտադիր կատարման համար կարող է հանձնվել ցանկացած

իրավասու դատարան, ինչպես նաև կատարվել 1958 թվականի Նյու Յորքի
Կոնվենցիայի անդամ ցանկացած երկրում: